




ՅՈՒՆԻԲԱՆԿ

Խ Ո Ր Հ Ր Դ Ի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02		<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>		<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	
		22.06.2026		22.06.2026	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	4
ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋ- ՆԵՐԸ: ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ.....	5
ԳԼՈՒԽ 3. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ: ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ.....	10
ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ԴԵՐԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱ- ՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: ԽՈՐՀՐԴԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ	11
ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ.....	15
ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ	16
ԳԼՈՒԽ 7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	17
ԳԼՈՒԽ 8. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ.....	19
ԳԼՈՒԽ 9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	20

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 3/21</i>
		22.06.2026	22.06.2026	

ՆՊԱՏԱԿԸ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Խորհրդի կանոնակարգ»-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) նպատակն է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և գործող օրենսդրության համատեքստում սահմանել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ), որպես Բանկի կառավարման մարմնի, ձևավորման կարգը, անդամների ընտրության պայմանները, Խորհրդի դերը, իրավասությունները, գործառույթները և պատասխանատվությունը, Խորհրդի էթիկական հանձնառությունը, Խորհրդի նիստերի գումարման, անցկացման և արձանագրման կարգերը, Խորհրդի անդամների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն կանոնակարգը կիրառվում է Խորհրդի նախագահի, Խորհրդի անդամների, Վարչության նախագահի, Վարչության անդամների, քարտուղարի և շահագրգիռ այլ ստորաբաժանումների կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. հաստատած «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատելու մասին» հրաման	1955-Ն
«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք	ՀՕ-68
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք	ՀՕ-232
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.04.2013թ. հաստատած «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4	102-Ն որոշում
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 12.04.05թ. հաստատած «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» Կանոնակարգ 1	145-Ն որոշում
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրություն	CHT 01

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կորպորատիվ կառավարման կանոնագիրք՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրք»-ը.

Գործադիր մարմին՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող կոլեգիալ մարմին՝ Վարչություն.


Գործադիր պաշտոն՝ Բանկի Գործադիր մարմնի ղեկավար, անդամ.

Ընդհանրիկ անդամ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով տրված իմաստին համապատասխան.

Փոխկապակցված անձ՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով տրված իմաստին համապատասխան.

Նշանակալից մասնակից՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքով տրված իմաստին համապատասխան նշանակալից մասնակցություն ունեցող անձ.

Իրական շահառու՝ «Փողերի վլացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով տրված իմաստին համապատասխան.

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 4/21</i>
		22.06.2026	22.06.2026	

Խորհրդի անկախ անդամ՝ անձ, ով՝

ա. վերջին երեք տարվա ընթացքում Բանկում Գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել Բանկում կամ դրա հետ փոխկապակցված այլ անձի մոտ.

բ. վերջին երեք տարվա ընթացքում Բանկից կամ Բանկի հետ փոխկապակցված անձից (անձանցից) ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես Խորհրդի անդամ ստացած վարձատրության.

գ. վերջին երեք տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն՝ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, Խորհրդի անդամ, Գործադիր մարմնի անդամ (ներկայացուցիչ) չի ունեցել էական որևէ գործարար հարաբերություն Բանկի և/կամ Բանկի հետ Փոխկապակցված անձի (անձանց) հետ.

դ. վերջին հինգ տարվա ընթացքում չի հանդիսացել Բանկի արտաքին աուդիտն իրակա-նացնող անձի և/կամ դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) բաժնետեր և/կամ աշխատող.

ե. վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Բանկի Խորհրդի անդամ.

զ. չի հանդիսանում Բանկի Նշանակալից բաժնետեր.

է. վերջին մեկ տարվա ընթացքում անմիջական հսկողություն չի իրականացրել Բանկի նկատմամբ՝ որպես հանրային ծառայող.

ը. չի հանդիսանում սույն հասկացության «ա»-ից «է» ենթակետերում նշված անձանցից որևէ մեկի Ընտանիքի անդամ:

Խորհրդի ոչ գործադիր անդամ՝ Խորհրդի անդամ, որը միաժամանակ Բանկի կամ վերջինիս կողմից հսկվող կամ դրան հսկող կազմակերպության Գործադիր պաշտոն զբաղեցնող անձ կամ աշխատող չէ.

Շահակից՝ Բանկի գործունեության մեջ հետաքրքրություն ունեցող անձ, որը կարող է ազդեցություն ունենալ Բանկի վրա կամ որի վրա կարող է ազդել Բանկը: Շահակից կարող են դիտվել աշխատողները, հաճախորդները, ավանդատուները, մատակարարները, տեղական համայնքը, պետությունը, հանրությունը և այլ անձինք:


ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Խորհուրդը Բանկի կառավարման կոլեգիալ մարմին է, որն ապահովում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

1.2. Իր գործունեության ընթացքում Խորհուրդը ղեկավարվում է Կորպորատիվ կառավարման կանոնագրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով, Բանկի կանոնադրությամբ, Բանկի այլ ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով:

1.3. Խորհուրդն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է Բանկի և Բանկի Խորհրդի անդամների՝ շահերի բախման կանխարգելմանն ուղղված, ինչպես նաև Խորհրդի գործունեության թափանցիկության սկզբունքի ապահովմանն ուղղված գործընթացներ:

1.4. Խորհրդի իրավասությունները դադարեցվում են, այդ թվում նաև՝ ժամանակավորապես, բացառապես ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 5/21</i>
		22.06.2026	22.06.2026	

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ: ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ: ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Խորհրդի ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, Բանկի կանոնադրությամբ և Կորպորատիվ կառավարման կանոնագրքով, եթե «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով այլ բան նախատեսված չէ:

2.2. Բանկում վարվում է Խորհրդի անդամների ռեեստր, որի պատասխանատուն Խորհրդի քարտուղարն է:

2.3. Խորհրդի անդամ կարող են լինել, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ օտարերկրյա պետության քաղաքացի հանդիսացող գործունակ անձինք, որոնք բավարարում են ՀՀ օրենքներով, Կենտրոնական բանկի իրավական ակտերով, սույն կանոնակարգով և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին:

2.4. Բանկի խորհուրդը կազմված է Խորհրդի անկախ և ոչ անկախ (այդ թվում՝ Խորհրդի ոչ գործադիր անդամ հանդիսացող) անդամներից:

2.5. Բանկում խրախուսվում է Խորհրդի կազմում Անկախ անդամների և փոքր բաժնետերերի ներկայացուցիչների առկայությունը՝ կարևորելով Խորհրդի անկախ և անկողմնակալ դատողություն իրականացնելու ունակությունը:

2.6. Խորհրդի անկախ անդամների թիվը կազմում է Խորհրդի կազմի առնվազն մեկ երրորդը:

2.7. Խորհրդի անկախ անդամը չի ներկայացնում որևէ բաժնետիրոջ կամ շահառուի շահը, իր գործունեության մեջ դրսևորում է անաչառություն և անկողմնակալություն, կոչված է Բանկին մատուցել պրոֆեսիոնալ ծառայություններ:

2.8. Խորհրդի անկախ անդամի ընտրության ժամանակ Խորհրդի անդամի անկախությանն առնչվող հանգամանքների առկայության դեպքում վերջինիս անկախ Խորհրդի անդամ համարելու համար պետք է տրվի հստակ բացատրություն:

2.9. Խորհրդի անդամի անկախության ապահովմանը միտված սահմանափակումները պետք է գործեն Խորհրդի անդամի պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում:

2.10. Բանկի բաժնետեր չհանդիսացող անձինք ևս կարող են ընտրվել Խորհրդի անդամ:


2.11. Խորհուրդը բաղկացած է Խորհրդի նախագահից և Խորհրդի անդամներից:

2.12. Խորհրդի կազմում կարող է ընդգրկվել առավելագույնը 9 (իննը) անդամ: Խորհրդի քանակական կազմը որոշվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ **Ընդհանուր ժողով**) որոշմամբ:

2.13. Բանկի Խորհրդի կազմը և կառուցվածքը պետք է ապահովեն Բանկի բոլոր բաժնետերերի և այլ շահագրգիռ կողմերի շահերի արդար և անաչառ ներկայացումը:

2.14. Խորհրդի քանակական կազմը հիմնվում է Խորհրդի անդամների որակավորման, գիտելիքների, փորձի և հմտությունների վրա, ինչպես նաև Խորհրդի հավաքականորեն անհրաժեշտ որակավորումներ ունենալու սկզբունքի վրա և միտված է ապահովել Խորհրդի, որպես կառավարման կոլեգիալ ամբողջական մարմին, իր գործառույթների իրականացման արդյունավետության ապահովմանը, գործարար սովորույթների, կորպորատիվ մշակույթի և արժեքների պահպանմանը, տեսակետների բազմազանության խթանմանը:

2.15. Բանկը հավասար հնարավորությունների գործատու է, ուստի Խորհրդի ձևավորման գործընթացում առաջնորդվում է բոլոր տեսակի խտրականության (սեռային պատկանելիության, տարիքային, աշխատունակության, ընտանեկան կարգավիճակի, հավատքի, համոզմունքների, ռասայական, էթնիկական պատկանելիության կամ ազգային հիմքերով) բացառման սկզբունքով:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 6/21</i>
		22.06.2026	22.06.2026	

2.16. Խորհուրդը յուրաքանչյուր թեկնածուի առաջադրման փաստաթղթերում պետք է ներկայացնի մեկնաբանություններ, թե որքանով է վերջինիս ներդրումը հանդիսանում կամ շարունակում մնալ (գործող Խորհրդի անդամների դեպքում) կարևոր Բանկի համար:

2.17. Խորհրդի անդամների ընտրության նպատակով իրականացվում է թեկնածուների ուսումնասիրություն՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված «Հավուր պատշաճի» ուսումնասիրման սկզբունքների:

2.18. Ուսումնասիրվում է թեկնածուների գիտելիքների, հմտությունների, փորձի և մտքի անկախության համապատասխանությունը, հեղինակությունը և համբավը, ինչպես նաև գնահատվում թեկնածուի այլ զբաղվածությունը՝ արդյոք թեկնածուն ունի բավարար ժամանակ Խորհրդի անդամի պարտականությունները լիարժեք իրականացնելու համար:

2.19. Բանկի Խորհրդի անդամների հմտությունների ոլորտները ներառում են (սակայն չեն սահմանափակվում դրանցով) բանկային գործ, կապիտալի շուկաներ, ֆինանսներ և վարկ, հաշվապահական հաշվառում և ֆինանսական հաշվետվություններ, վճարային համակարգեր և տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռազմավարական պլանավորում, ռիսկերի կառավարում, իրավագիտություն, համապատասխանության ոլորտ, ապահովագրություն, կորպորատիվ կառավարում և ղեկավարման հմտություններ:

2.20. Խորհրդի անդամի թեկնածուի մասնագիտական որակավորման համապատասխանությունը գնահատելու նպատակով կիրառվում են հետևյալ չափանիշները՝

ա. կրթություն՝ բարձրագույն,

բ. համապատասխան գիտելիքներ՝ Բանկի ռազմավարությունը, բիզնես մոդելը և ռիսկերը, ինչպես նաև ՀՀ տնտեսական և շուկայական միջավայրը վերլուծելու և գնահատելու համար,

գ. անհրաժեշտ գործարար որակներ և հմտություններ՝ Բանկի գործունեության առանձին ուղղությունները պատշաճ համակարգելու համար,

դ. աշխատանքային փորձ՝ ցանկալի է նվազագույնը 5 (հինգ) տարի ղեկավար պաշտոններում ՀՀ ֆինանսաբանկային ոլորտում, կամ՝

ե. նվազագույնը 5 (հինգ) տարի հանդիսացել է նշանակալից մասնակից կամ գլխավոր (գործադիր) տնօրեն, տնօրենի տեղակալ կամ վարչության (տնօրինության) կամ Խորհրդի անդամ՝ դիտարկման պահին ՀՀ-ում գործող առաջին 100 խոշոր հարկատուների ցանկում գտնվող կազմակերպությունում, կամ՝

զ. նվազագույնը 5 (հինգ) տարի հանդիսացել է նշանակալից մասնակից կամ գլխավոր (գործադիր) տնօրեն, տնօրենի տեղակալ կամ վարչության (տնօրինության) կամ Խորհրդի անդամ՝ արտերկրում գրանցված և/կամ գործող կազմակերպությունում, որի ակտիվները դիտարկման պահին գերազանցում են 5 (հինգ) մլն ԱՄՆ դոլարին համարժեք գումարը, կամ՝


է. առնվազն վերջին 3 (երեք) տարին անընդմեջ հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպության ներկայացուցիչ, կամ՝

ը. ունի տնտեսագիտության կամ կառավարման բնագավառում ակադեմիական կամ հետազոտական աշխատանքի առնվազն 4 (չորս) տարվա մասնագիտական ստաժ:

2.21. Խորհրդի անդամի թեկնածուները պետք է համապատասխանեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի Կանոնակարգ 1-ով և ՀՀ կենտրոնական բանկի այլ նորմատիվ ակտերով սահմանված բարեվարքության չափանիշներին:

2.22. Խորհրդի անդամները պետք է ունենան միմյանց լրացնող մասնագիտական տարատեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն:

2.23. Խորհուրդը պետք է խրախուսի իր անդամների բազմազանությունը, ներառյալ՝ ոլորտային մասնագիտացումը, կարողությունները, փորձառությունը, տարիքն ու սեռը:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 7/21</i>
		22.06.2026	22.06.2026	

2.24. Խորհրդի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է Բանկի ընդհանուր և իր անձնական համակարգման տակ գտնվող կոնկրետ ուղղությունների համար: Նշված ուղղությունների և դրանցից բխող իրավասությունների բաշխումն իրականացվում են Բանկի Խորհրդի որոշմամբ:

2.25. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ որպես ֆիզիկական անձինք փոխկապակցված լինեն: Խորհրդի և Վարչության անդամները ևս, որպես ֆիզիկական անձինք, չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

2.26. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ ձայների 3/4-ով, ոչ պակաս, քան **1 (մեկ)** տարի պաշտոնավարման ժամկետով: Խորհրդի անդամի լիազորությունների ընդհանուր ժամկետը չի սահմանափակվում:

2.27. Խորհրդի բոլոր անդամները պետք է տարեկան վերընտրվեն: Խորհրդի կազմը պետք է պարբերաբար թարմացվի՝ երաշխավորելու, որ Խորհրդի կարողությունները բավարար են արագ փոփոխվող գործարար մարտահրավերներին արձագանքելու համար: Թարմ մտածելակերպը և նոր մոտեցումները պետք է հավասարակշռվեն Բանկում գործելու փորձառության հետ:

2.28. Ժողովին Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Խորհուրդը և Բանկի մասնակիցները:

2.29. Խորհրդի անդամների ընտրությունը, նշանակումը, փոխարինումը պետք է ապահովի Խորհրդի գործառույթի անընդհատության պահպանումը:

2.30. Խորհրդի գործունեությունը և կազմը թարմացվում է հաշվի առնելով արտաքին միջավայրի փոփոխությունները և Բանկի ռիսկայնության մակարդակը. Բանկի Խորհուրդը պետք է համաչափ լինի Բանկի չափին, բարդությանը, կառուցվածքին, տնտեսական նշանակությանը, ռիսկի նկարագրին և բիզնես մոդելին:

2.31. Խորհուրդը պետք է պլանավորի իր սերնդափոխությունը (իրավահաջորդությունը):

2.32. Խորհրդի սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորումը հիմնվում է Բանկի ռազմավարության և Խորհրդի գնահատման արդյունքների վրա:


2.33. Խորհրդի ոչ գործադիր անդամի թեկնածուի որոնումը կարող է կատարվել բաց գովազդի կամ արտաքին խորհրդատուի՝ Խորհրդի անդամի ներգրավման գծով ծառայություններ մատուցող անձի միջոցով:

2.34. Եթե Խորհրդի գործող անդամը գտնվում է հնարավոր թեկնածուների ցանկում (վերընտրվում է), ապա Խորհուրդը պետք է ներկայացնի դրա պատշաճ հիմնավորումը:

2.35. Բանկի բաժնետերերն իրենց կողմից Խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրելու դեպքում այդ մասին գրավոր հայտնում են Բանկի Խորհրդի նախագահին տարեկան ժողովի, ինչպես նաև արտահերթ ժողովի (եթե արտահերթ ժողովի օրակարգում ընդգրկված է Խորհրդի անդամ(ներ)ի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարց) մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Առաջարկվող թեկնածուների թիվը չի կարող գերազանցել Խորհրդի անդամների սահմանված թիվը:

2.36. Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում ինքնաառաջադրման դեպքում, գրավոր առաջարկում նշվում է թեկնածուի անուն-ազգանունը, նրա՝ Բանկի բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը (առկայության դեպքում), նրան առաջադրող Բանկի բաժնետիրոջ/բաժնետերերի/ անուն-ազգանունը կամ անվանումը, վերջինիս պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը:

2.37. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին Բանկի կանոնադրությամբ:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 8/21</i>
		22.06.2026	22.06.2026	

յամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե.

ա. առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ /բաժնետերերի/ կողմից խախտվել է Բանկի կանոնադրությամբ սահմանված ժամկետը,

բ. ամբողջական չեն կամ բացակայում են սույն Կանոնակարգի 2.36 կետով սահմանված տվյալները,

գ. առաջարկը հակասում է ՀՀ օրենսդրության, Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:

2.38. Խորհուրդն իր կողմից Խորհրդի անդամության թեկնածու առաջադրում է Բանկի ժողովի օրակարգում ընդգրկելու միջոցով: Բանկի մասնակից(ներ)ը, որը/որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում է/են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսին, իրավունք ունի/ունեն առանց ընտրության ընդգրկվելու Խորհրդի կազմում, կամ դրանում նշանակելու իր/իրենց ներկայացուցչին:

2.39. Բանկի այն մասնակիցները, որոնք Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին Խորհրդի կազմում: Նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը Խորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ ժողովին տեղեկացնելու դեպքում: Այդ պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա. Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը,


բ. միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող Խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները,

գ. պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ,

դ. միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են Ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ Ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 (երեսուն) օր առաջ:

2.40. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Խորհրդի կազմում, ընդ որում, նման մասնակից է համարվում Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կանոնակարգի 2.39 կետում նշված պայմանագիրը: Փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի Խորհրդի կազմում՝ առանց Ընդհանուր ժողովի կողմից ընտրության: Փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն Ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում սույն կանոնակարգի 2.39 կետում

 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏԵՐԱՆ	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02		<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>		<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	
		22.06.2026		22.06.2026	

նշված պայմանագիրը կնքած Բանկի մասնակիցները: Բանկի փոքր մասնակիցները ծանուցվում են Բանկի Խորհրդի կողմից իրենց փոքր մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու մասին Ժողովի համար ծանուցման կարգով՝ սույն մասով սահմանված պայմանագիրը ստանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում: Ծանուցվելուց հետո փոքր մասնակիցները առաջադրում են Խորհրդի անդամի իրենց թեկնածուին: Համաձայնության չգալու դեպքում Ժողովի անցկացման օրը փոքր մասնակիցները փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում են Խորհրդի անդամի թեկնածու՝ իրենց կողմից առաջադրված թեկնածուների թվից: Քվեարկությունը կազմակերպվում և անցկացվում է Բանկի Խորհրդի նախագահի կամ նրա նշած Խորհրդի անդամի կողմից: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին տեղեկատվությունը Խորհրդի կողմից ներկայացվում է Ընդհանուր ժողովին՝ Ժողովի կայացման օրվանից առնվազն 30 օր առաջ, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

2.41. Բանկերի գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի իմաստով Խորհրդի նախագահը և Խորհրդի անդամները համարվում են Բանկի ղեկավարներ: Նրանք, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված և/կամ համագործակցող անձինք համարվում են Բանկի հետ կապված անձինք:

2.42. Բանկի կողմից Խորհրդի նախագահի և Խորհրդի անդամների հետ կնքվող գործարքները չեն կարող վերջիններիս համար առավել բարենպաստ պայմաններ (այդ թվում՝ գործարք կնքելու հնարավորություն, գին, տոկոսներ, ժամկետ և այլն) նախատեսել, քան Բանկի աշխատակից չհամարվող այլ ֆիզիկական անձանց, ինչպես նաև իրավաբանական անձանց հետ կնքված նույնանման գործարքները: Խորհրդի նախագահի և Խորհրդի անդամների հետ կապված անձանց հետ գործարքները կնքվում են Բանկի կողմից համապատասխան գործարքների կնքման համար նախատեսված ներքին ընթացակարգերի պահպանմամբ:

2.43. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

ա. նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.


բ. նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի Խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

գ. մեկ տարվա ընթացքում բացակայել է Խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից (իրական ժամանակի ռեժիմով և Բանկի կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն).

դ. օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

2.44. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Բանկն իրավունք ունի Խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով Խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

2.45. Խորհրդի անդամները վարձատրվում են իրենց աշխատանքի համար՝ ըստ կատարված աշխատանքի բնույթի, Խորհրդի և հանձնաժողովների նիստերին մասնակցության, ընդ որում՝ Խորհրդի անդամների վարձատրության մեծ մասը պետք է լինի հաստատուն բնույթի:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 10/21</i>
		22.06.2026	22.06.2026	

2.46. Խորհրդի անդամների վարձատրության չափը հաստատվում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդին կից Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողովի առաջարկի հիման վրա:

2.47. Խորհրդի յուրաքանչյուր անդամի վարձատրության չափը սահմանվում է՝ հիմք ընդունելով վերջինիս մասնագիտական որակավորումը և իր կողմից համակարգվող Բանկի գործունեության ուղղությունները:

2.48. Խորհրդի անդամների վարձատրության համակարգը պետք է համապատասխանի Խորհրդի անդամների և Բանկի երկարաժամկետ շահերին, խրախուսի ռիսկերի առողջ և արդյունավետ կառավարումը:

ՓԼՈՒՒՄ 3. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ: ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

3.1. Խորհուրդը ղեկավարում է նախագահը, ով պատասխանատու է Խորհրդի արդյունավետ գործունեության համար:

3.2. Բանկի Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կազմից, վերընտրվում և ազատվում է Խորհրդի անդամների կողմից՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Խորհրդի նախագահի և Վարչության նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

3.3. Խորհրդի նախագահը պետք է ունենա անկախ և անաչառ դատողություն, խթանի Խորհրդի և Բանկի գործունեության թափանցիկությունն ու Խորհրդում քաջալերի բանավեճի մշակույթը:


3.4. Խորհրդի նախագահը՝

- ա. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
- բ. գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- գ. կազմակերպում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
- դ. նախագահում է Ընդհանուր ժողովում կամ նշանակում է ժողովի նախագահող,
- ե. ստորագրում է Ընդհանուր ժողովի և Խորհրդի ընդունած որոշումները, դրանցով հաստատված փաստաթղթերը,
- է. Բանկի վարչության նախագահի, Վարչության անդամների, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աշխատակիցների, Բանկի գլխավոր հաշվապահի հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր,
- զ. կազմակերպում է Խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը,
- է. Խորհրդում խթանում է բազմազանության և ներառականության մշակույթը,
- ը. խրախուսում է Խորհրդի բոլոր անդամների ներգրավվածությունը Խորհրդի նիստերին՝ հիմնվելով նրանց հմտությունների, փորձի և գիտելիքների վրա,
- թ. Խորհրդի անդամների միջև խթանում է փոխադարձ հարգանքի և բաց հաղորդակցության վրա հիմնված հարաբերությունները,
- ժ. Վարչության նախագահի հետ զարգացնում և ամրապնդում է արդյունավետ աշխատանքային հարաբերություններ, հարգելով վերջինիս պատասխանատվության շրջանակները՝ տրամադրում Խորհրդատվական աջակցություն, ինչպես նաև իրականացնում է Բանկի ներքին իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառնություններ:

3.5. Խորհրդի նախագահը պետք է լինի Խորհրդի ոչ գործադիր անդամ:

3.6. Խորհրդի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:

3.7. Խորհուրդն ունի քարտուղար, որն աջակցում է Խորհրդի աշխատանքներին և պատասխանատու է կորպորատիվ կառավարման առնչությամբ կառավարման մարմինների կողմից իրենց պարտավորությունների պատշաճ կատարմանն օժանդակելու համար: Խորհրդի քարտուղարի

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 11/21</i>
		22.06.2026	22.06.2026	

նշանակումը, վերջինիս իրավասությունների սահմանումը և լիազորությունների դադարեցումն իրականացվում են Խորհրդի կողմից:

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ԴԵՐԸ, ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ: ԽՈՐՀՐԴԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Բանկը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական Խորհրդի կողմից, որի դերն է նպաստել Բանկի երկարաժամկետ հաջողությանը, բաժնետերերի համար արժեքի ստեղծմանը և Բանկի Շահակիցներին աջակցմանը:

4.2. Բանկի Խորհրդի իրավասությունները սահմանվում են օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, Կորպորատիվ կառավարման կանոնագրքով և սույն կանոնակարգով:


4.3. Խորհուրդը սահմանում է Ընդհանուր ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը օրենսդրության պահանջներին համապատասխան:

4.4. Խորհուրդը պատասխանատու է Բանկի բնականոն և արդյունավետ գործունեության, Բանկի ակտիվների պահպանության, ինչպես նաև Բանկի բաժնետերերին, ՀՀ կենտրոնական բանկին և հասարակությանը ճշգրիտ ու արժանահավատ տեղեկատվություն ներկայացնելու համար:

4.5. Խորհուրդը պատասխանատու է Բանկում ներքին հսկողության համակարգի ներդրման և դրա արդյունավետության ապահովման համար:

4.6. Խորհրդի իրավասությանն են պատկանում

- 1) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, Բանկի զարգացման ծրագրերի, Բանկի ֆինանսական դրության առողջացման ծրագրերի հաստատումը,
- 2) Բանկի նպատակների, գործունեության սկզբունքների, կորպորատիվ արժեքների սահմանումը,
- 3) կառավարման արդյունավետության մշտադիտարկումը և, ըստ անհրաժեշտության, փոփոխությունների իրականացումը,
- 4) Խորհրդի և Վարչության նախագահի և Վարչության անդամների և բաժնետերերի շահերի հնարավոր բախումների, ներառյալ՝ Բանկի ակտիվների ոչ իրավաչափ օգտագործման և շահագրգռվածության առկայությամբ գործարքների վերահսկումն ու կառավարումը,
- 5) Կենտրոնական բանկի հետ բանկային օրենսդրության, տնտեսական նորմատիվների խախտումների վերացման վերաբերյալ պայմանագրերի կնքումը,
- 6) Կենտրոնական բանկի կողմից Բանկին տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ որոշումների ընդունումը,
- 7) Ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ ժողովի գումարումը, օրակարգի հաստատումը,
- 8) Ժողովի գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը, այդ թվում՝ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմման ամսաթվի սահմանումը,
- 9) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի և կատարողականի հաստատումը,
- 10) Բանկի տարածքային ստորաբաժանումների ստեղծման և լուծարման մասին որոշումների ընդունումը,
- 11) Բանկի տարածքային ստորաբաժանումների կանոնադրությունների, ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի հաստատումը,
- 12) Բանկի հայտարարված բաժնետոմսերի կամ դրանց մի մասի թողարկման մասին որոշման ընդունումը, բաժնետոմսերի տեղաբաշխման կարգի և պայմանների սահմանումը,
- 13) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը, դրանց տեղաբաշխման և մարման կարգի և պայմանների սահմանումը,

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 12/21</i>
		22.06.2026	22.06.2026	

14) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի (հաստիքացուցակի) հաստատումը,

15) Խորհրդի անդամների վարձատրության և պարզևատրման չափի սահմանումը,

16) Բանկի Վարչության ստեղծումը, Վարչության կազմի, խնդիրների, նիստերի գումարման և անցկացման, որոշումներ ընդունելու կարգի հաստատումը, Վարչության կանոնակարգի հաստատումը,

17) Բանկի Վարչության նախագահի, անդամների նշանակումը՝ Վարչության նախագահի ներկայացմամբ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,

18) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը և նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և նրանց վարձատրության պայմանների հաստատումը,

19) Ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը, վերջինիս վարձատրության չափի սահմանումը,

20) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման վերահսկումը,

21) ցանկացած ժամանակ արտաքին աուդիտի հրավիրումը՝ Բանկի միջոցների հաշվին,

22) վերստուգումների, ստուգումների նյութերի քննարկումը,

23) դուստր ընկերությունների ստեղծման, դրանց և այլ անձանց կանոնադրական հիմնադրամում մասնակցության չափի մասին որոշումների ընդունումը,

24) Բանկի գույքի շուկայական արժեքի սահմանումը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից: Գույքի շուկայական արժեքը որոշելիս՝ անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու վերաբերյալ որոշման կայացումը: Շահագրգիռ գործարքներում գույքի շուկայական արժեքը սահմանվում է Խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում,

25) Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքմանը (եթե գույքի արժեքը կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-50 տոկոսը որոշումն ընդունվում է միաձայն) համաձայնություն տալը,

26) շահագրգռվածության առկայությամբ գործարք կնքելու վերաբերյալ որոշումների ընդունումը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, Խորհրդի բոլոր անդամների շահագրգիռ ճանաչվելու դեպքում որոշումն ընդունում է ընդհանուր ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ,


27) Բանկի պարտապանների պարտավորության վրա տոկոսների հաշվարկի դադարեցման, պարտքերի զեղչման կամ ներման մասին որոշումների ընդունման վերաբերյալ համապատասխան ներքին իրավական ակտի հաստատումը,

28) տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,

29) բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ճանապարհով Բանկի կանոնադրական հիմնադրամի չափի մեծացումը,

30) Բանկի բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն իրականացնելու դեպքում դրանց տեղաբաշխման ազդագրի հաստատումը,

31) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը, ժողովի լիազորությամբ

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	էջ 13/21
		22.06.2026	22.06.2026	

շահույթից ձևավորված այլ ֆոնդերի օգտագործման կարգի հաստատումը,

32) Բանկի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի և ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանների հաստատումը,

33) օրենքով նախատեսված դեպքերում Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,

34) վարկավորման, ֆինանսավորման, դրամարկղային սպասարկման, տնտեսական գործունեության, արժեթղթերով գործառնությունների կատարման պայմանների ու կարգի սահմանումը,

35) միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, վճարման ձևի և վճարման ժամանակացույցի սահմանումը: Տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ առաջարկությամբ հանդես գալն Ընդհանուր ժողովում, շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ,

36) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

37) ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում Բանկի՝ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի քաղաքականություն սահմանումը,

38) ՓԼ/ԱՖ կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտերի հաստատումը,

39) ներքին դիտարկումների մարմնի և ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ներքին աուդիտի տարեկան ծրագրերի, դրանց կատարման հաշվետվությունների հաստատումը, ինչպես նաև այդ ծրագրերի իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

40) անհրաժեշտության դեպքում ՓԼ/ԱՖ կանխարգելման դիտարկումների մարմնի ուսումնասիրությունների նախաձեռնումը, աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների հաստատումը և դրանց իրականացման վերահսկումը,

41) ներքին դիտարկումների մարմնի և/կամ Ներքին աուդիտի հաշվետվությունների ստացումն ու քննարկումը՝ իր կողմից սահմանված հաճախականությամբ,

42) ներքին դիտարկումների մարմնի կողմից Խորհրդին ներկայացվող հաշվետվությունների հաստատումը,


43) ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի արդյունավետության ուսումնասիրության իրականացման հսկումը,

44) Բանկի Վարչության, ներքին աուդիտի ստորաբաժանման, գլխավոր հաշվապահի ներկայացրած հաշվետվությունների քննարկումը և որոշումների ընդունումը,

45) Բանկի մասին տեղեկատվության բացահայտման և հաղորդակցության վերահսկումը,

46) օրենքով, Բանկի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և Բանկի այլ ներքին իրավական ակտերով Խորհրդին վերապահված այլ լիազորությունների ու գործառնությունների իրականացումը:

4.7. Կանոնակարգի 4.6 կետով սահմանված լիազորությունները Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցեր են և չեն կարող փոխանցվել Գործադիր մարմնի լուծմանը, բացառությամբ 32-րդ ենթակետով սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման պայմանների հաստատման իրավասությանը, որը Բանկի Խորհրդի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի վարչությանը, ինչպես նաև 14-րդ ենթակետով սահմանված աշխատատեղերի հաստատման

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02		<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>		<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	
		22.06.2026		22.06.2026	

իրավասությանը, որը Բանկի կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել Բանկի վարչության նախագահին (Վարչությանը):

4.8. Խորհուրդը պարտավոր է քննարկել և Բանկի կանոնադրությամբ սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում ընդունել որոշում՝ Բանկի ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի կողմից Բանկի տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների վերաբերյալ:

4.9. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետիրոջը կամ բաժնետերերին՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

4.10. Խորհրդի որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին, կարող է բողոքարկվել դատական կարգով:

4.11. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում քննարկում է արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկում և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը:

4.12. Վերոհիշյալ հարցերի վերաբերյալ Խորհրդի նիստին կարող են ներկա գտնվել նաև Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Բանկում գործող բոլոր հանձնաժողովների ղեկավարները, որոնք իրենց առաջարկություններն են ներկայացնում Բանկի ռազմավարության, հաճախորդների սպասարկման բարելավման, Բանկի կառավարման ոլորտի այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

4.13. Առնվազն եռամսյակը մեկ անգամ Խորհուրդը քննարկում է Ներքին աուդիտի ստորաբաժանման, Վարչության նախագահի, Գլխավոր հաշվապահի և Վարչության անդամներից յուրաքանչյուրի ներկայացրած հաշվետվությունները:

4.14. Հաշվետվությունները ներկայացվում են սույն կանոնակարգով և Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

4.15. Բանկի Վարչության անդամների և Ներքին դիտարկումների մարմնի կողմից այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից) կատարելու դեպքում պահանջվում է Խորհրդի համաձայնությունը:


4.16. Խորհուրդը կանոնավոր հիմունքներով պետք է գնահատի իր կատարողականը և որոշի իր անդամների փորձառության ու կարողությունների համադրության պատշաճությունը: Խորհրդի գնահատումը նպատակ է հետապնդում բացահայտել Խորհրդի՝ որպես մեկ ամբողջության և դրա յուրաքանչյուր անդամի արդյունավետ գործելու ունակությունը: Գնահատման են ենթակա Խորհրդի, դրան կից հանձնաժողովների, Խորհրդի նախագահի և անդամների կատարողականները:

4.17. Առնվազն **հինգ** տարին մեկ անգամ Խորհուրդը պետք է գնահատվի արտաքին գնահատողի կողմից: Խորհուրդը տարեկան առնվազն մեկ նիստ պետք է նվիրի իր գործունեության գնահատմանը:

4.18. Խորհուրդը պետք է ապահովի իր գիտելիքների և գործունեության համապատասխանությունը Բանկի աճին և կառուցվածքի բարդացմանը:

4.19. Խորհուրդը պարտավոր է ապահովել իր անդամների շարունակական մասնագիտական զարգացումը:

4.20. Խորհուրդը պարտավոր է իր նոր անդամների համար անցկացնել ներածական դասընթացներ՝ ներկայացնելու Բանկի գործունեության ոլորտն ու մրցակցային միջավայրը, Բանկի կառավարման ու կորպորատիվ կառուցվածքը, Խորհրդի և Գործադիր մարմնի կազմը, այդ թվում՝ առանցքային աշխատողներին, Բանկի գործարար մոդելի առանձնահատկությունները, արտադրական (ծառայությունների), տեխնոլոգիական, ֆինանսական, սոցիալական, բնապահպանական գործընթացները, հիմնական ռիսկերը, Բանկի գործունեության ոլորտը կարգավորող իրավական

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 15/21</i>
		22.06.2026	22.06.2026	

դաշտը, հաճախորդների, գործընկերների և այլ շահակիցների հիմնական շրջանակը, ինչպես նաև Խորհրդի կողմից էական համարվող այլ տեղեկատվություն:

4.21. Խորհրդի կողմից Ընդհանուր ժողովի քննարկմանն են ներկայացվում Բանկի վերակազմակերպման և օրենքով սահմանված այլ հարցեր:

4.22. Խորհրդի էթիկական հանձնառությունը.

4.22.1. Խորհուրդը պետք է հետևի բարձր էթիկական չափորոշիչների: Բարձր էթիկական չափորոշիչներին հետևելը բխում է Բանկի երկարաժամկետ շահերից, նպաստում դրա նկատմամբ վստահության ամրապնդմանը և կորպորատիվ հեղինակության բարձրացմանը:

4.22.2. Խորհուրդը պետք է ստանձնի Բանկի էթիկական ու հակակոռուպցիոն համապատասխանությունն ապահովելու հանձնառությունն էթիկայի և համապատասխանության ծրագրի ներդրման և դրա իրագործման նկատմամբ հսկողություն ապահովելու միջոցով:

4.22.3. Խորհուրդը հաստատում է Բանկի կորպորատիվ վարքականոնները և Բանկի էթիկական ու հակակոռուպցիոն համապատասխանությունը խթանող կորպորատիվ քաղաքականությունները:

4.22.4. Խորհուրդն ապահովում է, որ կորպորատիվ վարքականոնները և քաղաքականությունները ներառեն Բանկի Շահակիցների և, ընդհանուր առմամբ, հանրության հետ հարաբերվելու սկզբունքներն ու կանոնները:

4.22.5. Խորհուրդը հետևում է, որ Բանկի կորպորատիվ վարքականոնները և քաղաքականությունները հասանելի լինեն նաշխատողներին և այլ շահակիցներին:

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5.1. Խորհրդի նիստերը գումարում է Բանկի Խորհրդի նախագահը՝ իր, Խորհրդի անդամի, արտաքին աուդիտն իրականացնող անձի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Կենտրոնական բանկի Խորհրդի, Բանկի Վարչության նախագահի կամ Վարչության, Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (բաժնետերերի) գրավոր պահանջով:

5.2. Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Բանկի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և Բանկի աշխատակազմի կանոնակարգով:


5.3. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

5.4. Խորհրդի նիստերը կարող են գումարվել և քվեարկությունն անցկացվել հեռակա քվեարկության կարգով: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ Խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Ընդ որում՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի Խորհրդի նախագահի ընտրության հարցերը, ինչպես նաև Բանկի կանոնադրությամբ նշված որոշ հարցեր չեն կարող լուծվել Բանկի Խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

5.5. Խորհրդի նիստերը վարում է Խորհրդի նախագահը, որը ստորագրում է նիստի որոշումները/արձանագրությունները:

5.6. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով մասնակցում են Խորհրդի անդամների կեսից ավելին:

5.7. Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 16/21</i>
		22.06.2026	22.06.2026	

5.8. Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված դեպքերի: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:

ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄԸ

6.1. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է հայերեն և ռուսերեն, թղթային եղանակով՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, մեկ բնօրինակից՝ նիստի ավարտից հետո 10-օրյա ժամկետում:

6.2. Խորհրդի նիստի արձանագրության մեջ նշվում են՝

- ա. արձանագրության հերթական համարը (համարանիշը),
- բ. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը, վայրը,
- գ. նիստին մասնակցած անձինք,
- դ. նիստի օրակարգը,

ե. քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի,

զ. քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Խորհրդի անդամների և Խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները,

է. նիստում ընդունված որոշումները:

6.3. Արձանագրությունները համարակալվում են եզակի համարանիշով:

6.4. Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են Խորհրդի նախագահը, նիստին մասնակցող Խորհրդի բոլոր անդամները, նիստի քարտուղարը, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:


6.5. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի Վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ՝ բացառությամբ Բանկի Վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի Վարչության նախագահը մասնակցում է Խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

6.6. Խորհրդի նիստերը հեռակա կարգով գումարելու դեպքում, Խորհրդի քարտուղարը Խորհրդի նիստի գումարումից առնվազն 5 (հինգ) օր առաջ Խորհրդի անդամներին է տրամադրում քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ նյութերը և դրանց որոշումների նախագծերը՝ հեռակա քվեարկության քվեաթերթիկի տեսքով:

6.7. Նյութերը կարող են տրամադրվել առձեռն, էլեկտրոնային փոստի, ֆաքսի կամ հեռահաղորդակցության այլ միջոցներով: Դրանք կազմվում են հայերեն ու ռուսերեն և հանդիսանում են տվյալ նիստի արձանագրության անբաժանելի մասը: Խորհրդի նիստերի արձանագրությունները, դրանց հավելվածներն ու նյութերը գաղտնի են և հանդիսանում են սահմանափակ օգտագործման տեղեկություններ:

6.8. Խորհրդի անդամները քվեարկում են «Կողմ», «Դեմ» կամ «Ձեռնպահ» բառերից որևէ մեկի դիմաց համապատասխան նշում կատարելու և քվեաթերթիկը ստորագրելու միջոցով: Խորհրդի անդամների կողմից լրացված (քվեարկված) քվեաթերթիկները Խորհրդի գումարման օրվանից 3 (երեք) օրվա ընթացքում կարող են ուղարկվել Բանկի իրավաբանական հասցեով՝ պատվիրված նամակով, առձեռն, էլեկտրոնային փոստի, ֆաքսի և հեռահաղորդակցության այլ միջոցներով: Հեռակա կարգով գումարվող Խորհրդի նիստերի փաստաթղթաշրջանառությունը կարող է կազմակերպվել նաև Բանկի Մոսկվա քաղաքում ներկայացուցչության միջոցով:

6.9. Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում ձայները հաշվարկվում են այն հարցերի մասով, որոնցով քվեարկողի կողմից նշվել է քվեարկության հնարավոր տարբերակներից միայն մեկը: Քվեարկության համար նախատեսված քվեաթերթիկները, որոնք լրացված չեն կամ լրացված

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 17/21</i>
		22.06.2026	22.06.2026	

են նշված պահանջի խախտմամբ, համարվում են անվավեր և այդ հարցերի մասով ձայները չեն հաշվարկվում: Այն դեպքում, երբ քվեաթերթիկը պարունակում է մի քանի հարցեր, նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցերի նկատմամբ չի հանգեցնում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը: Քվեաթերթիկը 1-ից ավելի էջ ունենալու դեպքում Խորհրդի անդամի կողմից ստորագրվում է յուրաքանչյուր էջի վրա:

6.10. Խորհրդի քարտուղարը քվեաթերթիկները ստանալուց հետո 2 (երկու) օրվա ընթացքում ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում է արձանագրություն: Հեռակա քվեարկությամբ որոշումը համարվում է ընդունված, ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված տվյալ որոշման ընդունման համար բավարար «Կողմ» ձայներ հավաքելու դեպքում:

6.11. Խորհրդի նիստերի արձանագրությունները և դրանց հավելվածները պահպանվում են թղթային և էլեկտրոնային եղանակներով, իսկ նյութերը՝ էլեկտրոնային եղանակով, դրանց համար նախատեսված սահմանափակ հասանելիությամբ հատուկ թղթապանակում՝ Բանկի ֆայլային սերվերի վրա:

6.12. Արձանագրությունների, դրանց հավելվածների և նյութերի պահպանության համար պատասխանատու է Խորհրդի քարտուղարը:

6.13. Խորհրդի քարտուղարը պարտավոր է Բանկի գործադիր մարմնին կամ այլ պատասխանատուներին ներկայացնել Խորհրդի հանձնարարականները և որոշումները, ինչպես նաև հետևել դրանց կատարման ընթացքին: Խորհրդի քարտուղարը պատասխանատու է Խորհրդին հաշվետվությունների ներկայացման գործընթացի նկատմամբ հսկողության համար:

ԳԼՈՒԽ 7. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Խորհրդի անդամներն **իրավունք ունեն** օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, Կորպորատիվ կառավարման կանոնագրքով, սույն կանոնակարգով և Բանկի ներքին իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝


- ա. Խորհրդի քննարկմանը ներկայացնել Խորհրդի որոշումների նախագծեր,
- բ. ունենալ ելույթներ, տալ հարցեր և անել առաջարկություններ Խորհրդի նիստերում,
- գ. առաջադրվել և ընտրվել Խորհրդի նախագահի պաշտոնում,
- դ. խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել Ընդհանուր ժողովին:

7.2. Խորհրդի անդամը կարող է ունենալ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

7.3. Խորհրդի ոչ գործադիր անդամները պետք է իրենց կառուցողական վարքագծով խնդիրներ առաջադրեն Գործադիր մարմնին, ուղղորդեն Բանկի ռազմավարական զարգացումը, Գործադիր մարմնին առաջարկեն իրենց խորհրդատվական աջակցությունը:

7.4. Կորպորատիվ կառավարման համակարգում Խորհրդի ոչ գործադիր անդամի դերը հիմնականում Խորհրդին լրացուցիչ փորձառություն հաղորդելն է հետևյալ հարցերում.

- ա. Բանկի առաջ ծառայած մարտահրավերների ընկալումը և աջակցությունը Բանկի ռազմավարական զարգացման հարցում,
- բ. Գործադիր մարմնի վերահսկումը և կատարողականի գնահատումը,
- գ. տեղեկատվության արժանահավատության, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման հուսալիության, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության ապահովումը,
- դ. Խորհրդի և Գործադիր մարմնի սերնդափոխության (իրավահաջորդության) պլանավորումը, գնահատման ու վարձատրության քաղաքականությունների ու համակարգերի ձևավորումը:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02		<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>		<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	
		22.06.2026		22.06.2026	

7.5. Յուրաքանչյուր Խորհրդի անդամ պետք է հավասարակշռող դեր ստանձնի Բանկի և Բանկի բաժնետերերի միջև, լինի բարեխիղճ և լիովին իրազեկ, որոշումների ընդունման ժամանակ կիրառի անկախ և խելամիտ դատողություն:

7.6. Խորհրդի անդամները **պարտավոր են** օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, Կորպորատիվ կառավարման կանոնագրքով, սույն կանոնակարգով և Բանկի ներքին իրավական այլ ակտերով սահմանված կարգով՝

ա. մասնակցել Խորհրդի նիստերին,

բ. գործել օրենսդրությանը, Բանկի կողմից ընդունված ներքին իրավական ակտերին համապատասխան,

գ. որոշումներ կայացնելիս կիրառել անկախ դատողություն,

դ. արդյունավետ կերպով ստանձնել իրենց պարտականությունները,

ե. իրենց պարտականությունները պատշաճ կատարելու համար հատկացնել բավարար ժամանակ, ուշադրություն և գործադրել ողջամիտ ջանքեր,

զ. ուսումնասիրել Բանկի Խորհրդի նախագահից, Վարչության նախագահից, նրա տեղակալներից, գլխավոր հաշվապահից, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարից և այլ անձանցից ստացված առաջարկությունները և հայտնել իրենց կարծիքը,

է. երրորդ անձանցից չընդունել այնպիսի օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ և հանգեցնել Բանկի կամ դրա հետ փոխկապակցված անձանց հետ շահերի բախման,

ը. իրենց պարտականություններն իրականացնելիս ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր մասնակիցների նկատմամբ,

թ. Խորհրդին և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին տրամադրել օրենքով սահմանված տեղեկություններ Բանկի գործարքներում իր շահագրգռվածության, Բանկի հետ գործարք իրականացնող անձանց հետ իր փոխկապակցվածության մասին,

ժ. աջակցել Բանկի հաջողությանը, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի առնելով՝

1) ընդունվող որոշումների հնարավոր հետևանքները երկարաժամկետ հատվածում.

2) աշխատողների շահերը.

3) հաճախորդների, մատակարարների և այլ անձանց հետ հարաբերությունների ամրապնդման անհրաժեշտությունը.

4) գործունեության ազդեցությունը հասարակության և շրջակա միջավայրի վրա.

5) գործարար հեղինակությունն ամրապնդող համապատասխան վարքագիծ դրսևորելու անհրաժեշտությունը.


6) արդարամիտ գործելու անհրաժեշտությունը:

7.7. Խորհրդի անդամը պետք է ունենա ռազմավարական մտածողություն, իսկ Խորհրդի կազմը պետք է ապահովի Խորհրդի անդամների միջև գիտելիքի, փորձառության, հմտությունների փոխլրացման և կոլեկտիվ համապատասխանության սկզբունքի կիրառելիությունը:

7.8. Խորհրդի անդամն իր պարտականությունները պարտավոր է կատարել անձամբ: Դրանց կատարումը չի կարող փոխանցվել այլ անձի:

7.9. Եթե Խորհրդի անդամն ունի անձնական ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն Բանկի կողմից կնքվող գործարքում կամ ձեռքբերվող պայմանավորվածություններում, ապա նա պարտավոր է այդ մասին հայտնել Խորհրդին մինչև գործարքի կնքումը կամ պայմանավորվածության ձեռքբերումը և ներկա չլինել գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանն ու քվեարկությանը:

7.10. Խորհրդի անկախ անդամը պարտավոր է ձեռնպահ մնալ իր անկախությունը վտանգող ցանկացած գործողությունից, իսկ անկախության կորստի դեպքում պարտավոր է այդ մասին տեղեկացնել Խորհրդին՝ բացահայտելով պատճառները:

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 19/21</i>
		22.06.2026	22.06.2026	

7.11. Խորհրդի անդամներն իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պատշաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով Բանկի ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով Բանկի Շահակիցների շահերը:

7.12. Իր պարտականությունները պատշաճ կատարելու համար Խորհրդի անդամը պետք է հասանելիություն ունենա և համոզված լինի, որ ստանում է արդիական, հավաստի և համապատասխան տեղեկատվություն: Անհրաժեշտության դեպքում նա պետք է հնարավորություն ունենա Բանկի միջոցների հաշվին ներգրավել արտաքին անկախ խորհրդատվություն:

7.13. Խորհրդի անդամների կողմից տեղեկացված որոշումների կայացմանը նպաստում են Կորպորատիվ քարտուղարը, ներքին աուդիտորը, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթները:

7.14. Իր պարտականությունները պատշաճ իրականացնելու համար Խորհրդի ոչ գործադիր անդամն իրավունք ունի հիմնավոր պահանջ առաջադրել Բանկի միջոցների հաշվին արտաքին անկախ խորհրդատու ներգրավելու վերաբերյալ:

7.15. Պարտականությունները պատշաճ կատարելու, ինչպես նաև Խորհրդի գործունեությունը և կատարողականը բարելավելու նպատակով Խորհրդի անդամը պետք է մշտապես ընդլայնի և կատարելագործի իր գիտելիքները՝ մասնակցելով վերապատրաստման ծրագրերին, ինչպես նաև ինքնուսուցման միջոցով: Վերջինս վերաբերում է նաև նոր օրենսդրության և կարգավորման պահանջներին ու Բանկի փոփոխվող իրավիճակին ու ընթացիկ ռիսկերին իրազեկ լինելուն:

7.16. Խորհրդի անդամը կարող է ունենալ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

7.17. Խորհրդի անդամները Բանկի առջև **պատասխանատվություն են** կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են այն Խորհրդի անդամները, որոնք Բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն եղել:

7.18. Խորհրդի անդամի պաշտոնից ազատվելը չի ազատում նրան իր մեղքով Բանկին պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

ԳԼՈՒԽ 8. ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

8.1. Բանկի Խորհուրդն իր աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և իր գործունեությանն աջակցելու նպատակով կարող է ստեղծել մասնագիտացված հանձնաժողովներ:

8.2. Խորհրդին կից հանձնաժողովները նպատակ ունեն բարելավել Խորհրդի գործունեությունը և առանցքային հարցերի վերաբերյալ տրամադրում են ավելի խորը փորձաքննություն:


8.3. Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն վերահսկողական և խորհրդակցական բնույթ: Խորհուրդն է ամբողջությամբ պատասխանատվություն կրում իր որոշումների համար:

8.4. Բանկի Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի Խորհրդի անդամները Բանկի Վարչության անդամները կամ այլ աշխատակիցներ:

8.5. Իրենց պարտականությունները կատարելու համար հանձնաժողովները պետք է հասանելիություն ունենան անհրաժեշտ տեղեկատվության, ստանան համապատասխան ֆինանսավորում, անհրաժեշտության դեպքում ներգրավեն արտաքին փորձագետներ կամ խորհրդատուներ:

8.6. Հանձնաժողովները հաշվետու են Խորհրդին և Խորհրդի կողմից սահմանված ձևաչափով ու պարբերականությամբ հաշվետվություններ են ներկայացնում նրան:

8.7. Բանկի Խորհրդին կից հանձնաժողովների նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ:

 ՅՈՒՆԻԲԱՆԿ	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02		<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>		<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	
		22.06.2026		22.06.2026	

8.8. Հատուկ կարիքներին կամ կորպորատիվ գործառնություններին արձագանքելու համար Խորհուրդը կարող է ձևավորել ժամանակավոր կամ հատուկ հանձնաժողովներ, որոնց վրա կարող է չտարածվել տեղեկատվության բացահայտման պահանջը:


ԳԼՈՒԽ 9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Գործող օրենսդրությունում, Բանկի կանոնադրությունում և Կորպորատիվ կառավարման կանոնագրքում փոփոխություններ կատարելու դեպքում մինչև սույն կանոնակարգում համապատասխան փոփոխություններ կատարելը, Խորհուրդը ղեկավարվում է օրենսդրության, Բանկի կանոնադրության և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի փոփոխված դրույթներով:

9.2. Սույն կանոնակարգի սեփականատեր է հանդիսանում Կորպորատիվ կառավարման և նախագծերի ներդրման դեպարտամենտը:

9.3. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 22-ից:

9.4. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 23-ին հաստատված Խորհրդի կանոնակարգը՝ [REG 02.1](#):

	ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ	REG 02	<i>Խմբագրություն 2</i>	
		<i>Հաստատման ամսաթիվ</i>	<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվ</i>	<i>էջ 21/21</i>
		22.06.2026	22.06.2026	

ՀԱՍՏԱՏԵՑ
<p>Բաժնետերերի ընդհանուր ժողովը</p> <p>Ընդհանուր ժողովը նախագահող</p> <p>Գ. Զաքարյան</p> <p>22.06.2026թ.</p>

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ
<p>Կորպորատիվ կառավարման և նախագծերի ներդրման դեպարտամենտի տնօրեն</p> <p>Ս. Իրիցյան</p>